

Հաստատում եմ՝ 30 հունիսի 2021 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր

միջազգայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ալեկսիայան Պարզև Մերզելի



Handwritten signature in blue ink.

ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԲԱԲԿԵՆԻ ՊԵՏՏՐՈՍՅԱՆԻ «ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ» թեմայով ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (գերմաներեն լեզու)» մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ժամանակակից հասարակության զլոբալացումը, բազմալեզվության, միջմշակութային հաղորդակցության զարգացման միտումներն անմիջական ազդեցություն են թողնում կրթական համակարգի վրա: Արդի պայմաններում բարձրագույն հաստատություններում ուսանողների՝ ապագա ուսուցիչների պատրաստման գործընթացի բարելավումն ու կատարելագործումը ժամանակակից մարտահրավերներին ի պատասխան գերակայությունների փոփոխություններ են պահանջում կրթության, մասնավորապես հանրակրթական և բուհական ոլորտում:

Արմատապես փոխվել են մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի հիմնարար հայեցակարգային դրույթները՝ անձնակենտրոն, գործունեական-կոմպետենտային, ճանաչողական-հաղորդակցական մոտեցումների տեսանկյունից: Տեղեկատվության փոխանցման ավանդական մեթոդները զիջում են ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներին: Այս առումով

Ա.Բ.Պետրոսյանի հետազոտության թեման չափազանց արդիական է ոչ միայն մանկավարժության, այլ հատկապես օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ոլորտում:

Գրախոսվող ատենախոսությունը՝ «Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» թեմայով, նվիրված է արդիական և բացառիկ կարևոր մի հիմնախնդրի՝ ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ստուգման ռազմավարությանը, որը ներկայումս պատշաճ կերպով չի հետազոտվել լեզվադիդակտիկայի և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի բնագավառում:

Այդ կապակցությամբ ատենախոսն իրավացիորեն նշում է, որ մինչ այժմ տեքստերի բովանդակության ըմբռնման ստուգման խնդիրը դիտարկվում էր՝ առանց ընթերցանության կոնկրետ տեսակի պատշաճ մատնանշման, մինչդեռ ընթերցանության տեսակներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնք պետք է իրենց արտացոլումը գտնեն օտար լեզուների դասավանդման դիդակտիկական բոլոր օղակներում:

Մինչդեռ այդ խնդրի լուծման նորովի մոտեցումները և հատկապես ներդրման խնդիրը դեռևս չի դարձել գիտական ուսումնասիրության առարկա:

Միանգամայն ընդունելի են ատենախոսի կողմից ձևակերպված օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները:

Աշխատանքն ունի կուռ կառուցվածք, որն ընգրկում է ներածություն, երեք գլուխ՝ իրենց ենթագլուխներով, գրականության ցանկ և հավելվածներ: Չանդրադառնալով յուրաքանչյուր բաժնի բովանդակության վերլուծությանը, ցանկանում ենք նշել, որ կասկած չեն հարուցում ատենախոսության նպատակը, վարկածը և դրանց հիման վրա սահմանված հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակները, մեթոդները, նորույթը, պաշտպանության դրված դրույթները, տեսական և գործնական արժեքը:

Առանձնահատուկ հարկ է նշել հետազոտության նորույթը: Հետազոտության գիտական նորույթը, ինչպես օբյեկտիվորեն նշում է հեղինակը, ձևավորված է՝ հաշվի առնելով ժամանակակից մանկավարժության, մեթոդաբանության և լեզվակրթության սկզբունքները: Հեղինակի արժեքավոր ձեռքբերումներից է նաև այն, որ փորձ է արվել

մշակել ուսուցման այնպիսի մի մեթոդական համակարգ, որն ուղված է ոչ միայն ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության տեքստերի ընկալումը ստուգող թեստերի միջոցով օբյեկտիվ տվյալների բացահայտմանը, այլ նաև ինքնաստուգմանը: Ընդհանուր առմամբ հեղինակի կողմից շատ հստակ է ձևակերպված հետազոտության նորույթը, որն արտացոլում է խնդրի բուն էությունը, ինչպես նաև սույն աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը (էջ 13):

Առաջին գլխում «Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության մեթոդական հիմքերը» քննության են առնվել հետևյալ հարցերը.

- Ժամանակակից լեզվակրթության քաղաքականության սկզբունքները:
- Ընթերցանության՝ որպես ընկալողական խոսքային գործունեության ուսուցման նպատակները:
- Ընթերցվող տեքստի ընդհանուր բովանդակության ընկալման առանձնահատկությունները:

Վերը թվարկված հարցերի բացահայտումը իրականացվել է Եվրախորհրդի լեզվաքաղաքականության լույսի ներքո և հիմնված է ժամանակակից հոգեբանամանկավարժական, մեթոդական գրականության վերլուծության հիման վրա:

Դրական կարելի է համարել այն փաստը, որ հեղինակի կողմից որպես լեզվակրթության գլխավոր նպատակ նշվում է սովորողի՝ համագործակցելու և հաղորդակցվելու կարողություններ զարգացնելը:

Երկրորդ գլխում «Ոչ լեզվական բուհերի ուսանողների՝ ընթերցանության ընկալման ստուգման առանձնահատկությունները» փորձ է արվում ճշգրտել ստուգման և գնահատման չափանիշները, վերլուծել և դասակարգել ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ընթացքում դրսևորվող ընկալողական կարողությունների ցանկը՝ հիմնվելով առաջատար մանկավարժ և մեթոդիստ գիտնականների հայեցակարգային մոտեցումների ու տեսակետների, մասնավորապես Ս.Կ. Ֆոլոմկինայի հայեցակարգի վրա:

Այս գլխում ներկայացված են ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի տեսական հիմնավորումները և

հիմնական ուղղությունները, ինչպես նաև ընդհանուր բովանդակությանը ծանոթացնող ընթերցանության ստուգման օբյեկտները:

Վերջին՝ երրորդ գլուխը՝ «Ընթերցանության ընդհանուր բովանդակության ըմբռնումը ստուգող մեթոդական համակարգի փորձարկում և արդյունքների վերլուծություն», կարելի համարել հեղինակի կարևոր նվաճումը, որտեղ ներկայացված են մշակված մեթոդական համակարգի կիրառումը գործնականում: Առաջ քաշված դրույթները և ուսումնասիրվող խնդիրները դիտարկվում են յուրացման գործընթացի տեսանկյունից, որոնցից յուրաքանչյուրն ուղղված է զարգացման այս կամ այն վերջնարդյունքի ապահովմանը:

Ատենախոսին հաջողվել է համապատասխան փորձաքննության միջոցով հիմնավորել առաջարկվող ստուգման տեխնոլոգիայի արդյունավետությունը, ինչի մասին վկայում են վիճագրական տվյալները:

Հստակորեն վերլուծվում է փորձարարական ուսուցման արդյունքում ստացված վիճակագրական տվյալները, ինչպես նաև ուսանողների գործունեության դրական և բացասական կողմերը: Վստահորեն կարելի է պնդել, որ առաջարկվող մեթոդական համակարգը նորարարական գործիք է ընթերցանության այս տեսակի բնագավառում տեքստերի բովանդակության ըմբռումը թեստավորմամբ ստուգելու համար: Այն նպաստում է ապագա ուսուցիչների շարունակական կրթությանը և մշտապես կատարելագործման ու զարգացման հնարավորություններ է ընձեռում նրանց:

Հեղինակի կողմից իրականացված մոտեցումը ենթադրում է ինչպես նպատակադրման, պլանավորման, այնպես էլ նոր նյութի մատուցման, գնահատման/ինքնագնահատման և S2S-ների օգտագործման կարողությունների ձևավորում:

«Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» թեմայով ատենախոսությունը տրամաբանորեն շարադրված, ամբողջական հետազոտությունն է՝ ուղղված մասնագիտական նորագույն այլընտրանքային տեխնոլոգիայի տեսական-մեթոդաբանական ներդրմանն ու գործնականում կիրառմանը, ինչի մասին է վկայում փորձարարական ուսուցման դրական արդյունքները:

Բարձր գնահատելով կատարված երկարատև, բազմափուլային հետազոտությունը, ստացած արդյունքների ներդրման առավելությունը, այնուհանդերձ կցանկանայինք նշել որոշ թերություններ:

1. Առաջին գլխի 1.2 և 1.3 ենթաբաժնում հստակ չի բացահայտվում, թե ինչպես են հարաբերակցվում մի կողմից՝ լեզվական նյութին տիրապետումը՝ որպես ստուգման օբյեկտ և տեքստում իմաստային կապերի հաստատումը, մյուս կողմից՝ այն, թե ընկալողական տեսանկյունից լեզվական ո՞ր ասպեկտն է, որ այս կամ այն չափով գերակա ազդեցություն ունի տեքստի բովանդակության իմաստային բացահայտման վրա:
2. Մասնագիտական կարողությունների մշակման և դասակարգման գործում մեծ նշանակություն ունի տեքստի բովանդակության ըմբռնումը: Աշխատանքում չի նկատվում բովանդակության ըմբռնմանը բնորոշ գործողությունների տրամաբանական հաջորդականությունը: Կարևոր է նաև այն հարցը, թե ինչպես են ստուգման օբյեկտները հարաբերակցվում ըմբռնման գործընթացին:
3. Հայտնի է, որ ստուգման և գնահատման համակարգը պայմանավորված է արտաքինից դեպի ներքին մեխանիզմների անցումով, այսինքն՝ ուսուցչի գնահատումից դեպի աշակերտի ինքնագնահատումը: Այս առումով հարց է ծագում, թե ինչպես է ընթանում ուսանողների ինքնագնահատումը:
4. Աշխատանքում առկա են որոշ լեզվական վրիպումներ, կրկնություններ:

Նշված նկատառումները ամենևին չեն նսեմացնում քննարկվող ատենախոսության տեսական արժեքը և գործնական նշանակությունը:

«Գերմաներեն բնագրերի ընթերցանության բովանդակության ստուգման ռազմավարությունը ոչ լեզվական ֆակուլտետում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական, ավարտուն հետազոտություն է: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈՂ-ի գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Ասվածը հիմք է տալիս միջնորդել 020 «Մանկավարժություն» մասնագիտական խորհրդի առջև շնորհել մանկավարժական գիտությունների գիտական աստիճան

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (գերմաներեն լեզու)»
մասնագիտությամբ:

Գրախոսականը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի
2021 թվականի հունիսի 30 - ին կայացած N 6 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի
հետևյալ անդամները՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, Բ.Գ.Պ., պրոֆեսոր
Ա.Սիմոնյանը, Բ.Գ.Պ., դոցենտ Ս. Սարինյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Թումանյանը և
ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Ա.Ա.Սիմոնյան

Հաստատում եմ՝ 30 հունիսի 2021 թ.

Գիտքարտուղար,
Բ.Գ.Թ.՝



Ռ.Ս. Կասաբարովա